

ՀՈՒՍԿ ԸՆՀԱՆՔ

Մտածե՛ք է որ ձեզ կը սիրեմ ,
— Տառնեալքը տարուան սէր է , —
Վարդագոյն է՛ք զոմ , Լս՝ դեղնած ,
Գարունն ունի՛ք զոմ , Լս՝ ծըմաւն :

Բուններս ծաղկած են լսայիսով
Լեղակներով գերեզմանդի .
Ընդհուպ խամբած ճակատս ամբողջ
Պիս՝ անցնոցով հովանաւորի :

Տգոյն արեւս իմ խոնարհող ,
Հորիզոնով մէջ 'օի տուրի ,
Եւ բրդուրի վրայ մանաւուն՝
Իմ վերջին տունս ամա կ'եսնեմ :

Այն , թող բերնիս վրայ ձեր բերնն
Ինչպիսի համբոյր մ'ընամարմաց ,
Որ կարենամ գերեզմանիս
Մէջ գէթ հանգաւս տեղով մնամ :

Թ. Մանուկ, Կոթիկ

ԱՆՆԱՆ ԵՐԳ

Աւուրնի՛ց չուրակներուն

Ողբն երկայն՝

Կը խոցէ սի՛րսս անայայայակ
Թախիծով :

Երբ ժամն հրնչէ , հեղձամարդունկ
Եւ գունաս՝

Ես հին օրե՛րը կը յիշեմ

Ու կուլամ :

Ու կ'ըստարեմ , զիս լրեող ժամն
Հովուն եակ ,

Մերք հոս մերք հոն , հրման չորցած
Տեւելին :

ՓՈՒ ՎԵՐԼԵՆ

Տ Ա Ղ

Այսին առջինն է՛ք միտ , անցա՛ծ ճոճիճե՛ր ,
Լոյսին մէջ բիրտ , կապոյթին
Վրայ զընուած , չուրերուն ա՛լին , լսայիսով
Ցանկապատի մը մօտիկ :

Մ'ս ալ ձեզ պէս մեռելապա՛ր եմ . հոգիս ,
Մրտա՛յլ վիճ , ձե՛ր գոյնն ունի՛ .
Բայց աղէտե՛մ ու Մամե՛ն դո՛ւրս կը սլամամ ,
Ինչպէս կասա՛ր ձերին :

Թարգմ. Ա. Զ.

ԺԱՆ ՄՈՐԱՆՈՒ

Պարտած էրիկը , կատաղի , կ'ուզէ որ սակայն
Վրէժնեւորուի ամենէն ստոկալին կատարէ , կը-
նորը սիրականը անոր ձեռքովը մեռցնէ ու ան
ու ստոկալանքով յա՛մը յա՛մը հատցնէ : Գիշեր
մը ուր խաւարը ածուխի փողիով տինգիւրքը
բոլոր սեւցուցած էր ծովակնին կանաչ ու թան-
ձըր , խորունկ շուրթերուն վրայն մանր աշխակ-
ներ վէճովէստով կը ձգուէին , կը տարածուէին ,
գլուքներ թան մը կար ծովուն վրայ , ճրպղը
իր տեղէն անդիտակից՝ նորէն բաց մնացած
սիրականի աչքեր մը պէս խաւարին վրայ կը
նայէր : Սիրուք իր սիրածին շուտ կը հասնի :
Հետուն լողուտը մը կայ նորէն . ալիքները
թեւի մը հետ կը կուտին , մարած խշրտուք
մը կը լսուէր ջրի . ծովի-հարսին սիրականն է որ
ծովը կը բանայ , կ'էսը հասաւ անա , ձայնը
աւելի որոշ կուգայ . բայց , ո՛վ ստակալի սան-
ջան , ճրպղը իր տեղը մարեցաւ ու ալ աչքերը
բան չին տեսներ : Վեր առին , վար նետեցին
զայն շուրթերը , յարած թեւերը կախուեցան
ու շուրթեր բացուեցան . . . Երկին իր վրէժը
կը լուծէր , ու սիրականը , ծովի-հարսին կրտ-
սիճ սիրականը , կամաց կամաց , յուսահատի
տանջանքներով շուրթերուն մէջ մնաւ . Իր
սուգած տեղէն փրփուրներ ցատկեցին վեր
պղպղալով ու անոնք ալ քիչ մը ետքը մարե-
ցան գացին :

Զ.

Առաւօտուն , արեւն երբ լուսացաւ ու գիշերն
իր արհաւիրքներով ծովին տակ գնաց՝ ալիք-
ները արեւն կարմիր երակներ կը բերէին
ափունքն ի վար :

Ու ալ չեւեւցաւ . ծովու-հարսը , դուրս
չեւաւ . մարդ չի տեսաւ գինքը , մինակ օր մը
հովիւները երբ արօտէն դարձան՝ շապիկի մը ,
շալվար մը , զոյգ մ'օղեր ու ապարանջան մը
րեւին գիւղը , քարերուն վրայ դրուած՝ գտած
էին : Տեսնողները ճանչցան ու բարի թէ անո՛րն
էր , բայց ինչո՞ւ խեղդուե՛ր էր , ցաւն ի՞նչ
էր որ . . .

Ե

Զուրերը խփեցին ու գիւղը ալիքներուն
տակ մնաց , հիմա նոյն գիւղին վրայ , ալիք-
ներուն մէջ , ամեն գիշեր սկար լոյս մը կը
չողայ , փայլիլոզ ապակիի կտորի մը , փոստ-
րայի մը պէս . ու կ'ըսեն նոյն սիրոյ կանխեղն է
որ շուրթեր իրենք խորեղն կ'անդրադարձնեն
ու չեն մարեր զայն երբէք :

Առաւօտները , ամեն արեւածողի , նոյն
ափունքի եղէգնուածներն զոյգ մը ձերմակ ,
փրփուրի գոյն , կարմիր կտուցով թուռներն
դուրս կ'ընեն հանդարտ լողալով , առանց երդի ,
անշուշտ կը լողան , կը կրտուին , թեւերին
շուրթի մէջ կը թափնեն ու շուրթ մանր ցայտ-
քեր կը թողուն շուրթերին , մարդ չգիտեր
ո՛ր կ'երթան ու առաւօտներէն դաւա , ալ չեն
երեւիր : Գիւղացիները անոնց հրացան չեն
քաշեր երբէք :

1895

ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ